ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/16, 06.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Տրանզիտ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցում, «Գերզանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիայի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 31.01.2019թ. թիվ 2 արձանագրության 3-րդ և 5-րդ կետերով ընդունված որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ք. Երևան

Գնումների բողոքարկման խորհրդին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող.1

Բողոք բերող անձ՝ <<ՏՐԱՆԶԻՏ>> ՍՊԸ
Հասցե՝ ՌԴ, ք. Մոսկվա, Կալուժսկի հրապարակ, տուն 1
Էլ. փոստ՝ tranzit.llc@mail.ru

Ներկայացուցիչ՝ Տիրան Լաճիկյան
Նույն. քարտ՝ 004647319, տրված՝ 20.06.2014թ., 011-ի կողմից
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աղայան 11Դ, բն. 4
Հեռ. +37491883388

Պատվիրատու՝ *«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ*
Հասցե՝ *ՀՀ, ք. Երևան, Գ.Հովսեփյան 26*
Էլ. փոստ՝ *hripsime.navasardyan@1tv.am*

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ 19/2
Գնման ընթացակարգի առարկան՝
«Գերազանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիա

N 4494-19
06 02 19

ԲՈՂՈՔ

1. Բողոքի առարկան

Սույն թվականի հունվարի 24-ին *«Գերազանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիայի* ձեռքբերման նպատակով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտը մերժվել է:

2. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

2"1" 2019 թվականի փետրվարի 01 ին «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ ստացվել է ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ-ի թիվ 2 արձանագրությունը, որի 3 րդ կետով սահմանված է, որ Ընկերության կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ. մասնավորապես՝ 1-ին, 2-րդ, 2"1-րդ, 3 րդ, 4-րդ, 5-րդ, հավելվածներում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները: Իսկ արձանագրության 5-րդ կետով սահմանված է, որ ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության կողմից ներկայացված հայտը:

ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 12 րդ ենթակետով սահանված է, որ **գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.**

- ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ **Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով**:

Տվյալ դեպքում Ընկերությունը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ և վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևվում է, որ ընկերությունը իր կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը պետք է ներկայացներ բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակով, այլ ոչ թե հաստատեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ուստի գտնում ենք, որ ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ-ի թիվ 2 արձանագրության 3-րդ և 5 րդ կետերով ընդունված որոշումները իրավաչափ չեն:

3.Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ.

1" Պարտավորեցնել ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** *ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի* 31.01.2019թ ի թիվ 2 արձանագրության 3-րդ և 5-րդ կետերով ընդունված որոշումները:

Կից ներկայացնում եմ.

1. Տուրքի վճարման անդորրագիրը"

2. ***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2*** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը:

Ներկայացուցիչ՝ ..... ՏԻՐԱՆ ԼԱՃԻԿՅԱՆ

06.02.2019թ.